

Արձանագրություն №1/2012-2013

<<Երևանի պետական համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2012թ. սեպտեմբերի 27-ին տեղի ունեցած թիվ 1 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 62-ը (վաթսուներկու):

Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. ԵՊՀ գիտական խորհրդի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում: (Ձեկ.՝ ԵՊՀ գիտքարտուղար Մ. Ա. Սողոմոնյան)
2. 2013-14 ուստարվա բակալավրիատի ընդունելության մասնագիտությունների ցանկի հաստատում: (Ձեկ.՝ ԵՊՀ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյան)
3. ԵՊՀ որակի ապահովման հայեցակարգի հաստատում: (Ձեկ.՝ ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի տեղակալ, որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա. Ս. Բուդաղյան)
4. ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի կանոնադրության հաստատում: (Ձեկ.՝ ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի տեղակալ, որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա. Ս. Բուդաղյան)
5. Հաղորդում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի իրականացման արդյունքների մասին (2011/2012 ուստարվա կտրվածքով): (Ձեկ.՝ ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Ա. Աղայան)
6. 2012-13 ուստարվա անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում: (Ձեկ.՝ ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի տեղակալ, ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան)
7. Ընթացիկ հարցեր
 - 7.1 Դորա Սաքայանին և Դաիսակու Իկեդային ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին:
 - 7.2 ԵՊՀ գիտական խորհրդի մշտական հանձնաժողովների կազմերում փոփոխություններ կատարելու մասին:
 - 7.3 ՌԴ ԳԱ համակարգային ծրագրավորման ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ համակարգային ծրագրավորման ինստիտուտի և ԵՊՀ-ի միջև ձեռք բերված պայմանավորվածությունները հաստատելու մասին:

7.4 <<ԵՊՀ բուսաբանության ամբիոն>> կառուցվածքային ստորաբաժանումը <<ԵՊՀ բուսաբանության և սնկաբանության ամբիոն>> վերանվանելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. Լսեցին.- ԵՊՀ գիտական խորհրդի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատման մասին:

Որոշեցին.- 1.1/ Հաստատել ԵՊՀ գիտական խորհրդի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցը:

2. Լսեցին.- 2013-14 ուստարվա բակալավրիատի ընդունելության մասնագիտությունների ցանկի մասին: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը և Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ս. Առաքելյանը ներկայացրեցին 2013/14 ուստարվա բակալավրիատի ընդունելության մասնագիտությունների և դրանց քննությունների ցանկը, առաջորկվող որոշ փոփոխություններով հանդերձ:

Արտահայտվեցին. – Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը, Ա. Սահակյանը, Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Վարդանյանը, Ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ Դ. Սեդրակյանը:

Որոշեցին. - Հաստատել ներկայացված ցանկերը:

3. Լսեցին. - ԵՊՀ որակի ապահովման հայեցակարգի մասին: Պրոռեկտորի տեղակալ, ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա. Բուդաղյանը ներկայացրեց հայեցակարգի հիմնական դրույթները՝ նշելով, որ նախկին հայեցակարգը ամբողջովին չէր բխում եվրոպական ուղենիշների և չափորոշիչների պահանջից, ուստի անհրաժեշտություն է առաջացել վերափոխել այն:

Արտահայտվեցին. – Ռեկտոր Ա. Սիմոնյանը, պրոռեկտոր Ա. Գրիգորյանը:

Որոշեցին. – հաստատել ԵՊՀ որակի ապահովման հայեցակարգը:

4. Լսեցին. - ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի կանոնադրության մասին: Ա. Բուդաղյանը ներկայացրեց նաև ԵՊՀ գիտխորհրդի 2012թ. հունիսի 28-ի որոշմամբ ստեղծված ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի խնդիրներն ու գործառույթները, որոնք ամրագրվել են նշված կանոնադրությունում:

Որոշեցին. - Հաստատել ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի կանոնադրությունը:

5. Լսեցին. - Հաղորդում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրագույն կրթագիտական ծրագրի իրականացման արդյունքների մասին (2011/2012 ուստարվա կտրվածքով):

Ժ. Աղասյանը ըստ կառուցամասերի ներկայացրեց մոդուլները և դասընթացների տեսակները:

2011/2012 ուստարում կրթական կառուցամասում վերապատրաստմանը մասնակցել է 1642

ունկնդիր: Այնուհետև ըստ մոդուլների ներկայացվեց ունկնդիրների թիվն ու բաշխումն ըստ

ստորաբաժանումների: Ժ. Աղասյանը եզրակացրեց, որ 5 տարում նախատեսված 30 կրեդիտը դժվար հասանելի չէ: Դասավանդելու համար ընտրված են լավագույն մասնագետներ, և նրանց բարեխիղճ աշխատանքի արդյունավետությունը արդեն հաշվարկելի է:

Որոշեցին. – ընդունել ի գիտություն:

6. Լսեցին. - **2012-13 ուստարվա անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում:** ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը նշեց, որ ցուցակը կազմվել է ֆակուլտետային գիտխորհուրդների կողմից ընդունված որոշումների հիման վրա:

Որոշեցին. – Հաստատել 2012/2013 ուստարվա կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը:

7. Լսեցին. – **Ընթացիկ հարցեր:**

7.1 Լսեցին. - **Դախսակու Իկեդային և Դորա Սաքայանին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին:** Ռեկտոր Ա. Սիմոնյանը ներկայացրեց նշված անձանց կենսագրությունը, Սոկա Գակկաի ընկերության հիմնադիր նախագահ Դախսակու Իկեդայի ներդրումը խաղաղասիրական մշակույթի տարածման, հայ-ճապոնական մշակութային հարաբերությունների զարգացման հարցում: Ա. Սիմոնյանը ներկայացրեց նաև Դորա Սաքայանի պատկառելի ներդրումը հայագիտության զարգացման գործում:

Որոշեցին. - Խաղաղասիրական անձնվեր գործունեության, մարդասիրական արժեքների տարածման և արմատավորման գործում ձեռք բերած ակնառու նվաճումների, հայ-ճապոնական մշակութային կապերի զարգացման գործում ունեցած նշանակալի ներդրման համար <<Սոկա Գակկաի Ինթերնեյշնլ>> ընկերության նախագահ Դախսակու Իկեդային շնորհել ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

Հասարակական և հայրենասիրական բեղուն գործունեության և հայագիտության բնագավառում նշանակալի ձեռքբերումների համար պրոֆեսոր Դորա Սաքայանին շնորհել ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

7.2 Լսեցին. - **ԵՊՀ գիտական խորհրդի մշտական հանձնաժողովների կազմերում փոփոխություններ կատարելու մասին:** Ռեկտոր Ա. Սիմոնյանը նշեց, որ ԵՊՀ ուսանողական խորհրդի նախագահի և մի շարք անդամների փոփոխություններ են տեղի ունեցել, ուստի անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել ԵՊՀ գիտական խորհրդի հանձնաժողովներում:

Որոշեցին. –

1. ԵՊՀ գիտական խորհրդի՝ իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության մշտական հանձնաժողովի կազմից հանել ԵՊՀ ուսանողական խորհրդի նախկին նախագահ Յուլակ Արամի Ակոպյանին և

հանձնաժողովի կազմում հաստատել ԵՊՀ ուսանողական խորհրդի նախագահ Ռաֆֆի Արայի Քարամյանին:

2. ԵՊՀ գիտական խորհրդի՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային մշտական հանձնաժողովի կազմից հանել ԵՊՀ ուսանողական խորհրդի նախկին նախագահ Յուլյա Արամի Ակոպյանին և հանձնաժողովի կազմում հաստատել ԵՊՀ ուսանողական խորհրդի նախագահ Ռաֆֆի Արայի Քարամյանին:
3. ԵՊՀ գիտական խորհրդի՝ որակի ապահովման մշտական հանձնաժողովի կազմից հանել ԵՊՀ ուսանողական խորհրդի նախկին անդամ Հարություն Աշոտի Ազգալոյանին և հանձնաժողովի կազմում հաստատել ԵՊՀ ուսանողական խորհրդի անդամ Ալեքսանդր Նելսոնի Սարգսյանին:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

7.3 Լսեցին. - ՌԴ ԳԱ համակարգային ծրագրավորման ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ համակարգային ծրագրավորման ինստիտուտի և ԵՊՀ-ի միջև ձեռք բերված պայմանավորվածությունները հաստատելու մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը ներկայացրեց ՌԴ գիտությունների ակադեմիայի համակարգային ծրագրավորման ինստիտուտի տնօրեն Վ. Իվաննիկովի, ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանի և ՀՀ ԳԱԱ համակարգային ծրագրավորման ինստիտուտի գիտական քարտուղար Հ. Ավետիսյանի միջև 26.09.2012թ. կայացած հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները:

Որոշեցին. –

1. Հաստատել կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածությունն առ այն, որ 2009թ. սեպտեմբերի 21-ին ստորագրված թիվ 009-09-01 պայմանագրով սահմանված աշխատանքների ավարտի արդյունքում գոյացած մնացորդային ֆինանսական միջոցները ուղղվում են Երևանի պետական համալսարանի համակարգային ծրագրավորման լաբորատորիաների՝ ակադ. Վ. Պ. Իվաննիկովի գիտական ղեկավարության ներքո անցկացվող ծրագրերի ֆինանսավորմանը:
2. Հաստատել կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածությունն առ այն, որ ՌԴ ԳԱ համակարգային ծրագրավորման ինստիտուտի հետ կնքված պայմանագրերի շրջանակներում ԵՊՀ-ի կողմից կատարվող վերադիր ծախսերի չափը որոշվում է համապատասխան համաձայնագրերով, որոնք, սակայն, չեն կարող գերազանցել իրականացվող աշխատանքների ընդհանուր արժեքի 20 տոկոսը:
3. Հաստատել կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածությունն առ այն, որ ՌԴ ԳԱ համակարգային ծրագրավորման ինստիտուտի հետ կնքված պայմանագրերի շրջանակներում իրականացվող աշխատանքներից ավելացված արժեքի հարկ չի գանձվում:

7.4 Լսեցին. - <<ԵՊՀ բուսաբանության ամբիոն>> կառուցվածքային ստորաբաժանումը <<ԵՊՀ բուսաբանության և սնկաբանության ամբիոն>> վերանվանելու մասին: Կենսաբանության ֆակուլտետի ղեկան Է. Գևորգյանն իր ելույթում նշեց, որ հաշվի առնելով, որ ԵՊՀ բուսաբանության ամբիոնը հանդիսանում է

հանրապետությունում իրականացվող սնկաբանական հետազոտությունների միակ գիտական կենտրոնը, իսկ ԵՊՀ-ն հանրապետության միակ բուհն է, որ պատրաստում է սնկաբան մասնագետների, անհրաժեշտություն է առաջացել ԵՊՀ բուսաբանության ամբիոնն անվանափոխել այնպես, որ սնկաբանության մասնագիտությունն արտացոլվի անվան մեջ:

Որոշեցին. - <<Երևանի պետական համալսարանի բուսաբանության ամբիոն>> կառուցվածքային ստորաբաժանումը վերանվանել <<Երևանի պետական համալսարանի բուսաբանության և սնկաբանության ամբիոն>>:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան
03.10.2012թ.